# Փոքր դեպքեր մեծ մարդկանց կյանքից

## ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿՐՈՆԸ

Նոր համալսարանի բացմանը նվիրված հանդիսավոր ճաշկերույթին, XIX դարի հռչակավոր բնախույզ Էռնստ Հեկկելի հարևանը սեղանի մոտ, պատահաբար մի քահանա էր։ Երբ վերջինս ճաշից հետո սիգար հանեց, Հեկկելը սիրալիր կերպով նրան կրակ առաջարկեց, բայց դա արեց այնքան անճարպիկ, որ այրվող լուցկին քահանայի ձեռքն անցնելուն պես հանգավ։

— Տեսեք,— ասաց քահանան, ծաղրական ժպիտը երեսին,— գիտության լույսը մարեց։

— Ոչ մի զարմանալի բան չկա։ Եկեղեցու ձեռքում դա առաջին անգամը չէ։

## ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԵԹՈԴ Է, ԲԱՅՑ...

Ֆրանսիական ֆիզիկոս Լանժևանը տիրապետում էր հրաշալի մի ձիրքի. ամենադժվար գիտական պրոբլեմները նա բացատրում էր շատ պարզ ու հասկանալի լեզվով։

Մի անգամ գիտությունների ակադեմիայի նիստերից մեկում նա դասախոսություն կարդաց իր մի շատ բարդ աշխատության մասին, որից նույնիսկ ֆիզիկոսները գլուխ չէին հանում. կարդաց այնքան պարզ և հասկանալի ձևով, որ բոլորը, նույնիսկ կենսաբանները, բժիշկները, աշխարհագրագետները և ֆիզիկայից հեռու կանգնած այլ մարդիկ, խանդելով նրա շուրջը, սկսեցին սրտանց շնորհակալություն հայտնել այդ հոյակապ դասախոսության համար։ Հանկարծ ինչ-որ մեկը հարցրեց.

— Ներեցե՛ք, բայց ո՞րն է ձեր դասախոսական մեթոդի գաղտնիքը։

Լանժևանը պատասխանեց.

— Դասախոսելու ընթացքում լսարանում նստածների մեջ ես ընտրում եմ ամենաբութ դեմքը և բացատրում այնքան, մինչև որ նրա դեմքը պայծառանում է, ուրեմն՝ հասկացել է...

Հենց այդ ժամանակ զրուցողներին մոտեցավ ակադեմիայի պրեզիդենտը։

Ֆիզիկոսին շնորհակալություն հայտնելով, նա հարցրեց.

— Միայն ես ոչ մի կերպ չեմ կարողանում բացատրել Ձեր՝ այդքան սեռուն ուշադրությունըն իմ անձի նկատմամբ։

## 41-ՐԴ ԷՋՈՒՄ ԲԵՐՎԱԾ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

1. Գուրգենը և Աստղիկը ծնողներն են, Արամը և Նունեն՝ երեխաները։
2. Պողոսը ուսուցիչ է, Պետրոսը՝ միլիցիոներ, Մարտիրոսը՝ հրշեջ։

3. 326
476
———
1956
2282
1304

digitised by A.R.A.R.@